



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

№ 15-Ա

«28» փետրվարի 2017թ.

2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏ ԱՄՍՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի աշխատանքային ծրագիրը՝

Կարգադրում եմ.

1. Հաստատել ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի մարտ ամսվա ստուգումների ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հրապարակել ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի մարտ ամսվա ստուգումների և գործողությունների ժամանակացույցները՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:

ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչ՝

Ա. Կարապետյան

Հավելված 1

ՀՀ կրթության պետական տեսչության պետի
2017 թվականի փետրվարի 28-ի N 15-Ա կարգադրության

**2017Թ. ՄԱՐՏ ԱՄՍՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

h/h	Ստուգվող սուբյեկտի անվանումը	Ստուգման ժամկետները
1.	Տեսչավորում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գագարին գյուղի միջնակարգ դպրոցում	II տասնօրյակ
2.	Ստուգումներ ՀՀ Արարատի մարզի Վեդի, ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր, Վայք քաղաքների թվով 8 նախադպրոցական ուսումնական հաստատություններում	I,II տասնօրյակներ

Հավելված 2

ՀՀ կրթության պետական տեսչության պետի
2017 թվականի փետրվարի 28-ի N 15-Ա կարգադրության

**2017Թ. ՄԱՐՏ ԱՄՍՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց**

N	Գործողության անվանումը	Կատարման պատասխանատուն	Կատարման ժամկետը
1.	ՀՀ Արմավիրի մարզի թվով 48 պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործունեության ուսումնասիրություններ	Ուսումնասիրություն իրականացնող խմբեր	I տասնօրյակ
2.	Դրսեկության ձևով (էքստեն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման գործընթացի նկատմամբ վերահսկողություն	Ուսումնասիրություն իրականացնող խումբ	I,II տասնօրյակներ
3.	Դիմումներում և բողոքներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	I,II,III տասնօրյակներ